

Արձանագրություն թիվ 05

Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական

ինստիտուտ ՊՈԱԿ-ի մանկավարժության ֆակուլտետի

12.11. 2014թ. խորհրդի նիստի

Նիստին մասնկացում էին խորհրդի 17 անդամներից 14-ը՝ Ռ. Մարդոյանը /մանկ.ֆակ. դեկան, խորհրդի նախագահ/, Լ. Գևորգյանը /քարտուղար/, Լ. Հակոբյանը, Լ. Ղուկասյանը, Լ. Միքայելյանը, Կ. Սահակյանը, Լ. Աթանեսյանը, Յ. Կոչտոյանը, Կ. Եղոյանը, Ա.Կիրակոսյանը, Ա. Տոնոյանը, Լ. Միքայելյանը, Հ. Այվազյանը, Ս. Մարգարյանը:

Նախագահ՝ դեկան Ռ. Մարդոյան:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ –

1. Հեռակա համակարգի ուսանողների փոխադրականների քննարկում:
2. Հեռակա համակարգի ուսանողների ուսանողական նպաստի մասնակր փոխհատուցման քննարկում:
3. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ – Դեկան Ռ. Մարդոյանի հաղորդումը օրակարգի առաջին և երկրորդ հարցերի վերաբերյալ, որ քանի դեռ չի ավարտվել հեռակա համակարգի ուսանողների լուծարքի շրջանը, ուստի հնարավոր չէ լիարժեք տեղեկատվություն տրամադրել ուսանողների փոխադրականների վերաբերյալ, իսկ հեռակա համակարգի ուսանողների ուսանողական նպաստների մասնակր փոխհատուցման հարցը ևս անհնար է քննարկել, քանի որ ուսանողների դիմումներն ըն դունվում են մինչև նոյեմբերի 30-ը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Ղուկասյանը, Լ. Հակոբյանը, Կ. Սահակյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Օրակարգի առաջին երկու հարցերի քննարկումը տեղափոխել հաջորդ խորհրդի նիստին:

2. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ –

1. ԼՍԵՑԻՆ – Դեկանի հաղորդումը անհատական աշխատանքների կազմակերպման ընթացակարգի քննարկման վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Ղուկասյանը, Լ. Հակոբյանը, Կ. Սահակյանը, Լ. Աթանեսյանը, որոնք ներկայացրեցին ամբիոնների քննարկման արդյունքում կատարված դիտողությունները նշված ընթացակարգի վերաբերյալ.

- 3.6.1-ում աշխատանքը թույլատրել ներկայացնել նաև այլ տառատեսակներով, որոնք այժմ ավելի տարածված են /sylfean/,
- 3.7.4 –ը՝ որպես ձևայնացված փաստաթուղթ, աղյուսակի տեսքով կցել՝ յուրաքանչյուր աշխատանքի գնահատումն ավելի տեսանելի դարձնելու համար,
- Սահմանել օգտագործված գրականության ցանկում գրականության քանակ /օրինակ՝ մինչև 5-8 աղբյուր/:

ՈՐՈՇԵՑԻՆ – Գիտության և արտաքին կապերի բաժին ներկայացնել նշված դիտողություններն ու առաջարկները:

2. ԼՍԵՑԻՆ – Դեկանի հաղորդումը ուսանողների ավարտական աշխատանքների կազմակերպման ընթացակարգի վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Լ. Ղուկասյանը, Լ. Հակոբյանը, Կ. Սահակյանը, Լ. Աթանեսյանը, որոնք ներկայացրեցին ամբիոնների քննարկման արդյունքում կատարված դիտողությունները նշված ընթացակարգի վերաբերյալ.

- ընթացակարգում ներկայացնել, թե հատագոտական աշխատանքներ իրականակացնելիս ով է իրավասու տալու համապատասխան թույլատրություն, եթե այն պրակտիկայի վայր չի համարվում,
- սահմանել օգտագործվող գրականության ցանկում քանակ /մինչև 15-20 աղբյուր/,
- նշել ավարտական աշխատանքի գնահատման չափանիշները,
- սահմանել տառատեսակը, տեխնիկական պահանջները:

ՈՐՈՇԵՑԻՆ - – Գիտության և արտաքին կապերի բաժին ներկայացնել նշված դիտողություններն ու առաջարկները:

3. ԼՍԵՑԻՆ – Դեկանի հաղորդումը « Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մակավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ում ակադեմիական խորհրդատուների գործունեության կարգի քննարկման վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Լ. Ղուկասյանը, Լ. Հակոբյանը, Կ. Սահակյանը, Լ. Աթանեսյանը, որոնք ներկայացրեցին ամբիոնների քննարկման արդյունքում կատարված դիտողությունները նշված ընթացակարգի վերաբերյալ.

- Տրամադրել հավելյալ վճար խորհրդատուների համար, քանի որ մեծ պարտականություններ են դրված,
- Ուսանողների անհատակա պլան /1.2/ մասնագիտությունների թղթապանակ /2.4 կետ 3/, անհատական կրթական ծրագիր /3.8 կետ 1/ ուսանողի թղթապանակ /3.8 կետ 10/ հասկացությունները նկարագրել կից հավելվածում:

ՈՐՈՇԵՑԻՆ - Գիտության և արտաքին կապերի բաժին ներկայացնել նշված դիտողություններն ու առաջարկները:

*Նիստի նախագահ՝ մանկ. ֆակ. դեկան՝ /Ռ. Մարդոյան/
Քարտուղար՝ /Լ. Գևորգյան/*